

ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
(1886—1985 թթ.)

1985 թվականի հունիսի 18-ին, կյանքի 99-րդ տարում, Արտաշատի շրջանի Մասիս գյուղում վախճանվեց Տ. Պետրոս քահանա Մարգարյանը:

Հանգուցյալը ծնվել է 1886 թվականին Վանի շրջանի Տիրամայր գյուղում, հողագործի ընտանիքում:

Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, ապա ուսումը շարունակել Լիմ անապատում:

1913 թվականին նույն անապատում ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ գերաշնորհ Տ. Հովսեփ արքեպիսկոպոս Ռշտունու:

1913—1915 թվականներին քահանայագործել է նույն վանքում:

1915 թվականի Մեծ եղեռնի օրերին, բալմահալար հայերի հետ, գաղթել է Արևելյան Հայաստան և բնակություն հաստատել Արտաշատի շրջանի Մասիս գյուղում:

1915—1937 թվականներին քահանայագործել է Արտաշատի շրջանի կանական գյուղերում, իսկ 1956—1973 թվականներին՝ Մրգավանի Ս. Հակոբ եկեղեցում:

1973 թվականին, առաջացած տարիքի պատճառով, անցել է հանգստի:

Սույն թվականի հունիսի 20-ին, հինգշաբթի օրը, Մրգավանի Ս. Հակոբ եկեղեցում ս. սատարագ մատուցեց և հանգուցյալի վերջին օծման կարգը կատարեց արժանապատիվ Տ. Կարապետ քահանա Գոլոճյանը՝ ի ներկայության բազմաթիվ հավատացյալների և քահանա հայրերի:

Հանգուցյալի մարմինն ամփոփվեց Արտաշատի քաղաքային գերեզմանատանը:

Հանգուցյալն իր ողջ գիտակցական կյանքն ապրել է որպես համեստ և հավատավոր եկեղեցական:

Թող Աստված լուսավորի հանգուցյալ Տ. Պետրոս քահանայի հոգին: